# Հ. ԲԺՇԿՅԱՆԸ (ԳԱՅԸ) ԲԱՔՎԻ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վ. Ա. ՕՀԱՆՅԱՆ

*1906 թ. ՌՍԴԲԿ Բաքվի քաղաքային կոմիտեն, որը գլխավորում էին բոլշևիկները, որոշեց հիմնադրել նավթարդյունաբերական բանվորների ընդհանուր արհեստակցական միություն, որի կազմակերպման և գործունեության հետ կապված տնտեսական ու քաղաքական պայքարի պատմության լուսաբանման համար արժեքավոր նյութեր են պարունակում Հայկ Բժշկյանի (Գայի) 1906—1910 թթ. հայկական մամուլում լույս տեսած հոդվածները՝ «Բանվոր Հայկ» ստորագրությամբ՝ «Նամակներ նավթաշխարհից» ընդհանուր վերնագրով։*

*Այդ միության նպատակն էր, գրում է Հ. Բժշկյանը, «միևնույն արհեստի կամ գործի, զբաղմունքի բոլոր. անհատներին առանց ազգի, կրոնի, քաղաքական համոզմունքի ու սեռի խտրության համախմբել, միացյալ ուժ կազմել և բարդված ուժով կռվել ընդհանուրի կենսական շահերի բարվոքման օգտին»[1]։*

*Այդ մասին Ա. Մռավյանը գրում է. «1906 թվականի աշնանը ընկ. Ալյոշա Ջափարիձեի և մի խումբ առաջավոր բոլշևիկ բանվորների նախաձեռնությամբ կազմակերպվում է նավթարդյունաբերական բանվորների միություն, որն իր մեջ էր առնում և՛ մեխանիկական բանվորներին և՛ նավթահանքերում աշխատող բոլոր բանվորներին, առանց խտրության»[2]։*

*Նոր արհմիության անդամների ցուցակագրումը, տեղեկացնում է Հ. Բժշկյանը, սկսվեց 1906 թ. հոկտեմբերի սկզբին Բալախանիում, նոյեմբերին՝ Բիբի-Հեյբաթում. 1907 թ. հոկտեմբերին բացվեց միության բաժանմունքը Սև-քաղաքում, իսկ 1908 թ. փետրվարին՝ Սուրախանիում։ 1908 թ. հոկտեմբերի 1-ի տվյալներով արհմիության անդամների երեք քառորդը Բալախանիի բանվորներն էին։ Միությունը առաջին երկու տարվա ընթացքում արագ աճեց. 1906 թ. հոկտեմբերին միության անդամների թիվը 225 մարդ էր, իսկ 1908 թ. հոկտեմբերի 1-ին 8704»[3]։*

*Արհմիության խնդիրների մասին բացատրական աշխատանք կատարելու հետ Բաքվի բոլշևիկները անմիջականորեն գլխավորում էին միության կազմակերպումը, որի վարչության քարտուղարն էր Ալյոշա Ջափարիձեն։*

*Բաքվի նավթարդյունաբերող բանվորների արհմիության կազմակերպման հիմքում դրված էր ինտերնացիոնալիզմը, որը համախմբելով Բաքվի բազմազգ պրոլետարիատին հակադրվում էր ազգայնական կուսակցությունների պրոլետարիատի ուժերի պառակտման քաղաքականությանը։ Դաշնակցությունը ճիգ ու ջանք չէր խնայում հայ բանվորներին հեռու պահելու նավթարդյունաբերող*

---

[1] «Լրաբեր» (Աստրախան), 1909, № 10։
[2] Հին բոլշևիկների հիշողություններ։ Գիրք I, Երևան, 1958, էջ 25։
[3] Տե՛ս «Լրաբեր», 1909, №№ 10, 11, 12։

բանվորների արհմիությունից։ Դրա հետևանքն էր հայ բանվորների համեմատաբար փոքր տոկոսը միության կազմում (10%-ից պակաս, երբ հայերը կազմում էին Բաքվի բանվորների ընդհանուր քանակի 18%-ը)։ Դաշնակցության պրոպագանդիստները հայ բանվորներին հավատացնում էին, որ հայ ձեռնարկատերերը նրանց դրությունը կբարելավեն, եթե նրանք օտարների ազդեցությանը չենթարկվեն։ Բայց դրանք ապարդյուն փորձեր էին. դաշնակցությունը Բաքվում սեփական հայ արհմիություններ ստեղծել չկարողացավ։ Դրա պատճառն անշուշտ այն էր, որ նավթարդյունաբերող բանվորների արհմիության ազդեցությունը մեծ էր[4]։

Արհմիությունների կազմակերպման սկզբնական շրջանում բոլորն ընդունում էին, որ արհմիությունը անկուսակցական կազմակերպություն պիտի լինի, սակայն դրա մասին պարզ պատկերացում չկար։ Վիճելի էր նաև արհմիությունների ու կուսակցությունների փոխհարաբերության հարցը։

Բաքվի նավթարդյունաբերական բանվորների արհմիության կազմակերպումը հետապնդում էր նաև քաղաքական այնպիսի նպատակներ, որոնք համընկնում էին ամենից առաջ սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական պահանջներին։ Մյուս կուսակցությունները նավթարդյունաբերող բանվորների արհմիությունը անկուսակցական կազմակերպություն չէին համարում և արհմիության ղեկավար բոլշևիկներին մեղադրում էին «կուսակցամոլության» մեջ։

Հ. Բժշկյանը գրում էր «Մեր ընկերները... մերժեցին կուսակցական պրոֆեսիոնալ միության անհրաժեշտությունը, մանավանդ նավթաշխարհի համար, ուր թուրք, հայ, ռուս, հրեա, լեզգի և այլ ազգերի բանվոր դասը կողք-կողքի է կենակցում, տառապելով միևնույն կարիքների մեջ...»[5]։ Այնուհետև, անդրադառնալով սոցիալ-դեմոկրատական կազմակերպության դեմ դաշնակցականների ամբաստանություններին, նա գրում է. «Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները չեն, որ պիտի մեղադրվեն կուսակցամոլության ախտով, այլ այն անշնորհք քաղաքագետները, որոնք բանվորի անունն ու շահը վահան շինած, քողարկում են իրենց հակապրոլետարական ֆիզիոնոմիան...»[6]։

Պաշտպանելով արհմիությունների անկուսակցականության սկզբունքը, Հ. Բժշկյանը փաստորեն պաշտպանում էր այդ խնդրի վերաբերյալ ՌՍԴԲԿ դրույթը, որի մասին ավելի հանգամանորեն է արտահայտվել Ս. Սպանդարյանը՝ «...Բայց հակառակ ոստիկանական պետության բոլոր հալածանքներին,— գրում է նա,— արհեստակցական միությունները գնալով աճում են և տարածվում ամենուրեք։ Ինչպես հայտնի է, մեր կուսակցության վերջին

---

4 Դաշնակցությունը ազգային անջատվածության քաղաքականություն էր վարում նաև այլ բնագավառներում։ Ինչպես Հ. Բժշկյանն է հիշատակում «Հակաբանվորական մի քայլ» հոդվածում («Լրաբեր», 1908, № 34), ի հակադրություն ինտերնացիոնալ սկզբունքներով կազմակերպված «Տրուդ» սպառողական կոոպերացիայի, որն արդեն իր խանութներն էր բացել Բաքվի մի շարք քաղաքամասերում, դաշնակցությունը ստեղծել էր «Առաջ» սպառողական կոոպերացիան, որին անդամագրվել կարող էին միայն հայերը։

Նույն երևույթը նկատի ուներ Ստ. Շահումյանը, երբ գրում էր «ոչ մի քաղաքում այնքան կործանարար կերպով մասնատված չէ կոոպերացիան, ինչպես մեզանում Բաքվում» (տե՛ս Խ. Հ. Բարսեղյան, Ս. Շահումյանի կյանքի ու գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968, էջ 336)։

5 «Լրաբեր», Աստրախան, ՄՄ 10, 11, 12, 1909։

6 Նույն տեղում։

համագումարը որոշակի արտահայտվեց հօգուտ արհեստակցական միությունների կազմակերպության և նրանց անկուսակցական լինելուն»[7]։

Ս. Սպանդարյանը գտնում է, որ դաշնակցությունը խանգարում է բանվորական միությունների կազմակերպմանը։ «...Դաշնակցությունը իրեն լոզունգ հայտարարեց— զուտ ազգայնական արհեստակցական միություններ։ Գիտե՞ք ինչու. սոցիալ-դեմոկրատիայի համար պարզ է, որ յուրաքանչյուր բանվորական կազմակերպություն, որքան էլ որ նա հրաժարվի ամեն մի քաղաքական կռվից... իրերի ամբողջ ընթացքով անխուսափելիորեն պետք է ենթարկվի այն քաղաքական կուսակցության ղեկավարությանը, որը, ըստ էնգելսի «ներկայացնում է անգիտակից պրոցեսի գիտակից արտահայտիչը» այսինքն՝ սոց. դեմոկրատիային։ Այդ պատճառով մենք սառնասրտությամբ ենք նայում անկուսակցական արհեստակցական միությունների վրա և ամեն կերպ նպաստում ենք նրանց կազմակերպվելուն։ Մինչ դաշնակցությունը ամենից ավելի երկյուղ է կրում անկուսակցականությունից. նա վախենում է, որ այդ անկուսակցական կազմակերպությունների մեջ երևան կգա իր բուրժուական և նեղ ազգայնական բնույթը...»[8]։

Բոլշևիկները արհմիությունների առաջացման միայն սկզբնական շրջանում էին կողմնակից դրանց անկուսակցականությանը։ Հետագայում, երբ շատ երկրներում սոցիալ-դեմոկրատիայի աջ օպորտունիստական թևը արհմիությունների անկուսակցականությունը ամեն պատեհ առիթով օգտագործում էր նրանց չեզոքացնելու և քաղաքական դեմքից զրկելու համար, բոլշևիկները Լոնդոնի համագումարում փոխում են այդ դրույթը. ավելի ուշ՝ Շտուտգարտի միջազգային կոնգրեսում արդեն ճշգրտվում է սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ու արհմիությունների փոխհարաբերությունը։ Վ. Ի. Լենինը այդ խնդրին անդրադարձել է մի քանի անգամ։ «ՌՍԴԲԿ Ստոկհոլմի համագումարը արտահայտվեց հօգուտ անկուսակցական արհմիությունների, այսպիսով ընդունեց չեզոքության տեսակետը,— գրում է Լենինը,— ...ընդհակառակը Լոնդոնի համագումարը այլ սկզբունք առաջադրեց, միությունների մերձեցումը կուսակցության հետ ընդհուպ մինչև (որոշ պայմաններում) միությունների կուսակցական ճանաչելը։ ...Շտուտգարտի համագումարի բանաձևը... վերջ է դնում չեզոքության սկզբունքային ճանաչմանը»[9]։

Արհմիությունների և կուսակցությունների այդ մերձեցումը, իհարկե, բոլորովին չէր նշանակում, որ արհմիության մեջ ընդունվող ամեն մի բանվոր սոցիալ-դեմոկրատ էր դառնում, բայց կուսակցությունը ճանաչվում էր որպես քաղաքական ղեկավար ուժ արհմիության նկատմամբ։ Բաքվի բոլշևիկները ճիշտ այդպիսի սկզբունքով էին ղեկավարում նավթարդյունաբերող բանվորների արհմիությանը, այն վերածելով դասակարգային մարտական կազմակերպության։ Սակայն Հ. Բժշկյանը արհմիությունների անկուսակցականությունը համարում էր մշտական, անփոփոխ սկզբունք, չընդունելով կամ գուցե դեռ տեղյակ չլինելով Լոնդոնի համագումարի ու Շտուտգարտի կոնգրեսի որոշումներին։

Արհմիությունների կազմակերպման խնդրում լուրջ տարաձայնություններ գոյություն ունեին բոլշևիկների և մենշևիկների միջև։ Բոլշևիկների կարծիքով

---

7 Տե՛ս Ս. Սպանդարյան, Երկեր, հ. I, Երևան, 1959, էջ 47—49։

8 Նույն տեղում։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 85։

արհմիությունը պետք է ընդգրկեր արդյունաբերության տվյալ ճյուղի մեջ աշխատող, ղանաղան ազգությունների պատկանող, տարբեր մասնագիտությունների տեր բոլոր բանվորներին։ Մինչդեռ մենշևիկները հենց սկզբից Բաքվում ստեղծեցին երեք իրարից անշատ արհմիություններ և երկար ժամանակ ազդեցություն ունենալով մեխանիկների արհմիության ղեկավար օրգաններում, ամեն կերպ խոչընդոտում էին այդ արհմիության և նավթարդյունաբերող բանվորների արհմիության միաձուլմանը, որը հանգեցնում էր պրոլետարիատի ուժերի ջլատմանը։

Չնայած միավորման անհրաժեշտության մասին եղած խոսակցություններին, մեխանիկների արհմիության մենշևիկ ղեկավարները գործնական քայլ չէին կատարում, առաջարկելով միավորվել ֆեդերալ հիմունքներով, պահպանելով մեխանիկների միության բաժանմունքային վարչությունը և դրամարկղը։ Մերկացնելով նման միավորման կեղծ բնույթը Ջափարիձեն պահանջում է ստեղծել «մեկ միություն, մեկ վարչություն, մեկ դրամարկղ. տեղ չպիտի ունենան սեկցիոն վարչություններն ու սեկցիոն մարտական դրամարկղները»[10]։

Սակայն միավորումն այդպես էլ չկայացավ, դեռ ավելին մենշևիկները փորձեցին իրենց ձեռքը գցել նավթարդյունաբերող բանվորների արհմիության Բիբի-Հեյբաթի բաժանմունքը, բայց հաջողության չհասան։

Մենշևիկները փորձեցին նաև իրենց ազդեցության տակ գցել նավթարդյունաբերող բանվորների արհմիության վարչությունը այն ժամանակ, երբ ցարական ոստիկանությունը սկսեց Բաքվի բոլշևիկների, այդ թվում և արհմիութենական ղեկավարների ձերբակալությունները։

Նավթարդյունաբերող բանվորների արհմիության ղեկավարությունը դեմ էր մասնակի ու անկազմակերպ գործադուլներին։ Ս. Սպանդարյանը այդ առթիվ գրել է. «Միության ազդեցությունն ու նշանակությունը բարձրանում է օրեցօր... Միանգամայն հասկանալի է, որ ինտերնացիոնալ միության հեղինակության այդ աճումը պետք է անհանգստացներ բոլոր ազգերի նացիոնալիստներին, հանգիստ չտար նրանց»[11]։ Այնուհետև բերելով նավթարդյունաբերական բանվորների դեմ ուղղված ելույթի մի օրինակ (դաշնակցական «Վտակ» թերթի № 49-ում տպագրված թղթակցությունը Բալախանիից), Սպանդարյանը գրում է. «Ինչի՞ համար է դաշնակների այդ ամբողջ աղմուկը, կատաղի վայնասունը։ Գաղտնիքը շատ հեշտ է լուծվում, Միրզոևի «հայկական» ֆիրման հրավիրել էր նավթարդյունաբերական բանվորների միությանը։ Մինչ այդ մի այլ «հայկական» ֆիրմա՝ Պիտոևի ֆիրման նույնպես գործադուլի ժամանակ հրավիրել էր միության գործիչներին։ Երկու հարված իրար հետևից։ Էլ ինչպե՞ս չկատաղել, չդիմել ստի ու զրպարտության»։ Այո՛, հայ կապիտալիստները նույնպես ընդունում էին նավթարդյունաբերական բանվորների միության հեղինակությունը, ճանաչում էին նրա ուժը և դա էլ հենց կատաղեցնում էր դաշնակներին։ «Վտակի» թղթակիցը մեղադրում է միությանը խաբեբայության մեջ, օգտագործելով «Գուդոկում» տպագրված մասնակի գործադուլների դեմ գրված մի հոդված («Կոչեգարն» ստորագրությամբ)։

«Կոչեգարն» իր հոդվածում դեմ է մասնակի գործադուլին, իսկ դուք, միութենականներդ ղեկավարում եք միրզոևյան մասնակի գործադուլը։ Հակասու-

10 Տե՛ս Պ. Ա. Ջ ա փ ա ր ի ձ ե, Ընտիր հոդվածներ, ճառեր և նամակներ, Երևան, 1970, էջ 113։

11 «Гудок», 16. III. 1968.

թյուն, անհետևողականություն, խաբեբայություն և այլն և այլն,— ճչում է դաշնակցականը։ Միթե պարոնի համար պարզ չէ, որ պիտուևյան գործադուլի ժամանակ միության ներկայացուցիչները դեմ են դուրս եկել «փեշքեշային» գործադուլին, իսկ «սոցիալիստ» դաշնակցականները պաշտպանում էին բանվորներին այլասերող ու ստորացնող «պարգևը»[12]։

Հ. Բժշկյանը նույնպես հանդես է գալիս մասնակի, անկազմակերպ գործադուլների և բանվորների վարձատրության այն բոլոր ձևերի դեմ, որոնք բանվորներին ստորացուցիչ կախման մեջ էին պահում բարերարի տեսք ընդունած գործատերերից[13]։

1909 թ. Բաքվում սկսված նոր ձերբակալությունների և բանվորական կազմակերպությունների հալածանքի հետևանքով միությունը անկում է ապրում և կապիտալիստները աստիճանաբար բանվորներից հետ են խլում նրանց նվաճած իրավունքները։

Միայն հետագայում՝ 1916—1917 թթ., հատկապես Ջաֆարիձեի աքսորից վերադառնալուց հետո (1917 թ. ապրիլ) միությունը վերականգնվում է, կազմակերպվում են հզոր գործադուլներ ու ցույցեր, կնքվում է ընդհանուր կոլեկտիվ պայմանագիր։

Բաքվի նավթարդյունաբերական բանվորների արհեստակցական միության կազմակերպման գործում, բանվոր դասակարգի պայքարի ղեկավարման հարցերում բոլշևիկները սկզբունքային պայքար էին մղում ոչ միայն մենշևիկների, դաշնակների, այլ նաև մուսավաթիստների, էսէռների, կադետների և քաղաքական այլ հակառակորդների դեմ։ Այդ պայքարում բոլշևիկների սկզբունքների պաշտպանությամբ և պրոպագանդայով հանդես էր գալիս ադրբեջանցի բանվորների շրջանում աշխատանք ծավալելու նպատակով Բաքվի բոլշևիկյան կոմիտեի որոշմամբ ստեղծված Հումմեթ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։ Հումմեթի եռանդուն գործունեությանը պիտի վերագրել զգալի թվով ադրբեջանցի բանվորների ընդգրկումը Բաքվի նավթարդյունաբերող բանվորների արհմիության շարքերը։ Հումմեթի անդամներից արհմիության ակտիվ կազմակերպիչներ ու պրոպագանդիստներ էին Մ. Ազիզբեկովը, Մ. Մամեդյարովը, Ա. Բ. Ցուսուֆ-Զադեն, Մ. Բ. Կասումովը, Բ. Դադաշևը, Ա. Սուլեյմանովը և ուրիշներ։

Հարավային (իրանական) Ադրբեջանից եկած բանվորների մասին իր հոդվածում Հ. Բժշկյանը մեծ համակրանքով է խոսում։ Այդ հոդվածում նա հետաքրքիր տվյալներ է բերում ադրբեջանցի բանվորների աշխատանքի ծանր պայմանների, ցածր աշխատավարձի, կենցաղային ու կուլտուրական անմխիթար վիճակի մասին[14]։

Հ. Բժշկյանը, որը այդ տարիներին բանվոր էր Բալախանիում, հոգուտ նավթարդյունաբերող բանվորների արհմիության պրոպագանդիստական ու կազմակերպչական աշխատանք էր տանում ոչ միայն Բալախանիի հայ բանվորների, այլև ադրբեջանցիների շարքերում։ Իր մի այլ թղթակցության մեջ նա գրում էր. «Ուրախալի էր տեսնել «Բոկենդորֆ» ֆիրմայի թուրք (ադրբեջանցի—Վ. Օ.) բանվորների ուշադիր և լուրջ վերաբերմունքը, երբ նրանց

12 Նույն տեղում։

13 Տե՛ս «Լրաբեր», Աստրախան, 22. IV. 1908։

14 «Լրաբեր», Աստրախան, №№ 32, 33, 1908։

*ասում էին արհմիության անհրաժեշտության, նրանց աննախանձելի վիճակի, գործադուլի մասին»*[15]։

*Այսպիսով, ինչպես տեսանք, նավթարդյունաբերող բանվորների արհմիության կազմակերպման, Բաքվի պրոլետարիատի պայքարի տեսական ու տակտիկական կարևորագույն խնդիրներում Հ. Բժշկյանը 1906—1910 թթ. հանդես է եկել բոլշևիկյան տեսակետների պաշտպանության դիրքերում։*

## АЙК БЖИШКЯН (ГАЙ)
## О ПРОФЕССИОНАЛЬНОМ СОЮЗЕ НЕФТЕПРОМЫШЛЕННЫХ РАБОЧИХ ГОРОДА БАКУ

В. А. ОГАНЯН

**Резюме**

В революционной борьбе пролетариата Закавказья важную роль сыграл профессиональный союз нефтепромышленных рабочих, созданный в 1906 г. по инициативе большевиков Баку.

Для освещения истории экономической и политической борьбы пролетариата Баку в рамках этой организации ценный материал содержится в статьях Айка Бжишкяна, опубликованных на страницах армянских прогрессивных газет 1906-1910 гг. В этих публикациях Бжишкян, в будущем прославленный военачальник Красной Армии, известный под именем Гай, выступает с большевистских позиций, что наглядно проявляется при сопоставлении его взглядов по ряду вопросов текущей политики со взглядами известных деятелей большевиков Закавказья—С. Шаумяна, А. Джапаридзе, С. Спандаряна и др.

[15] *«Ապագա», Թիֆլիս, 30. III. 1907։*